Ներկայացնել մշակույթի ձևավորման հիմնական ուղղությունները և դրանց զարգացման պատմությունը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում մարդկությանը հայտնի հասարակական կազմակերպման ձևերը,

- բ. ճիշտ է ներկայացնում մարդու առաջացման պատմությունը սկսված հնադարից մինչև մեր օրերը,
- գ. ճիշտ է ներկայացնում դիցաբանությունը, որպես հասարակական գիտակցության առաջին ձև,
- դ. ճիշտ է ներկայացնում նախնադարից դեպի քաղաքակրթություն անցման առանձնահատկությունները,
- ե. ճիշտ է բնութագրում պետականության առաջին ձևերը,
- զ. ճիշտ է ներկայացնում գիտությունների և արվեստի ծաղկման նախադրյալները հին շրջանում,
- է. ճիշտ է ներկայացնում միջնադարյան, Վերածնունդի և նոր շրջանի մշակույթի ձևավորման հիմնական ուղղությունները,
- ը. ճիշտ է ներկայացնում մեր ժամանակների մշակույթի հատկանշական կողմերը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 24 ժամ:
 Գործնական աշխատանք՝ 7 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 4

Ներկայացնել հայ մշակույթի ձևավորման հիմնական ուղղությունները և դրանց զարգացման պատմությունը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում հայ մշակույթի ձևավորման և զարգացման հիմնական ժամանակաշրջանները,
- բ. ճիշտ է ներկայացնում ազգային մշակույթի բնորոշ հատկանիշները,
- գ. ճիշտ է պարզաբանում հայ մշակույթի վրա օտար ազդեցության հիմնական միտումները,
- դ. ճիշտ է մեկնաբանում խորհրդանիշի դերը ազգային մշակույթի ձևավորման գործընթացում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 24 ժամ:
 Գործնական աշխատանք՝ 7 ժամ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ ԲՈԼՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուսանողին տրվում է տեստ որտեղ ներկայացված է մշակույթի սահամանման, բնութագրման և պատմական զարգացման փուլերի վերաբերյալ հարցեր որտեղից նա պետք է ընտրի ճիշտ տարբերակները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողն ընդգծում է թեստում գտնվող ճիշտ պատասխանների երկու երրորդը:

Ուսանողը կարող է նաև ներկայացնել առնվազն 2 գիտական բնույթի աշխատանք կամ հետազոտություն, ինչպես նաև 2-4 էջի չափով էլեկտրոնային ներկայացում՝ սալիկահանդես:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Մոդուլի ուսուցման ընթացքում կիրառվում է համապատասխան գրականություն՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Բացի առկա գրականությունից, դասավանդողները նպատակաուղղված կլինեն մոդուլի մեջ ընդգրկել նաև նոր նյութեր, ռեսուրսներ, որոնք կհարստացնեն և կլրացնեն մոդուլը: Մոդուլի թեմաները դասավանդելու համար առաջարկվող մեթոդներ կարող են լինել մտքերի տարափը, ԽԻԿ, փոքր խմբերով աշխատանքը, դերային խաղը, բաց բանավեճը, դեպքի ուսումնասիրությունը, դասախոսությունը և այլն:

Առանձին սովորողների ցանկության դեպքում կխրախուսվի ուսումնական թղթապանակի օգտագործումը: Առկա են նաև համապատասխան գեղարվեստական ալբոմներ և տեսաֆիլմեր:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՌԺՍ 5-11-009

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Մոդուլի նպատակն է ուսանողին տալ՝

- ընդհանուր գիտելիքներ երաժշտության պատմության, տեսակների, ոճերի մասին,
- ձևավորել սցենարին, տեսանյութին, բեմադրությանը համապատասխան երաժշտություն ընտրելու ունակություն:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

72 ժամ

Տեսական ուսուցում՝ 40 ժամ:

Գործնական պարապմունք՝ 32 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ Չկան

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

- 1.Ներկայացնել երաժշտության պատմության ձևավորման հիմնական ուղղությունները և դրանց զարգացման առանձնահատկությունները
- 2.Ներկայացնել հայ և արտասահմանյան երաժշտության հիմնական ներկայացուցիչներին և նրանց ստեղծագործությունը
- 3.Ներկայացնել երաժշտության ժանրերը և ոճերը, գործիքավորման առանձնահատկությունները
- 4.Կատարել երաժշտական ձևավորում

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1.

Ներկայացնել երաժշտության պատմության ձևավորման հիմնական ուղղությունները և դրանց զարգացման առանձնահատկությունները :

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում հայ և արտասահմանյան երաժշտության զարգացման պատմությունը,
- բ. ճիշտ է ներկայացնում երաժշտության զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 10 ժամ:

Գործնական աշխատանք՝ 8 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 2.

Ներկայացնել հայ և արտասահմանյան երաժշտության հիմնական ներկայացուցիչներին և նրանց ստեղծագործությունը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում է հայ և արտասահմանյան նշանավոր կոմպոզիտորներին, երգիչներին, կատարողներին և նրանց ստեղծագործությունները,
- բ. ճիշտ է ներկայացնում հայ և արտասահմանյան ժամանակակից երաժշտության նշանավոր դեմքերին:
- գ. Հիմնավորում է իր նախասիրությունները երաժշտության բնագավառում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 10 ժամ:
- Գործնական աշխատանք՝ 8 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 3.

Ներկայացնել երաժշտության ժանրերը և ոճերը, գործիքավորման առանձնահատկությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է տարբերում երաժշտական ժանրերը և ոճերը,
- բ. ճիշտ է ներկայացնում կամերային, գործիքային երաժշտությունը,
- գ. ճիշտ է մեկնաբանում երգի՝ ռոմանս, ժողովրդական, աշուղական, էստրադային և այլն առանձնահատկությունները,
- դ. ճիշտ է ներկայացնում տարբեր երաժշտական ոճերի գործիքավորման առանձնահատկությունները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 10 ժամ:
- Գործնական աշխատանք՝ 8 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 4.

Կատարել երաժշտական ձևավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ընտրում համապատասխան երաժշտություն՝ ըստ բեմադրական կամ նկարահանման նյութի բովանդակության,
- բ. ճիշտ է դրսևորում մի քանի երաժշտություն կրճատելու, երկարացնելու, միքսելու (միաձուլել) կարողությունները

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում՝ 10 ժամ:
- Գործնական աշխատանք՝ 8 ժամ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՁՈՑԸ ԲՈԼՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուսանողին կտրվեն հարցեր հայ ազգային, համաշխարհային և հոգևոր, ինչպես նաև դասական և ժամանակակից երաժշտարվեստի նմուշների վերաբերյալ, կհանձնարարվի ցուցադրել մեթոդներ և հնարքներ, որոնք ուղղված են ռիթմի և երաժշտական ընկալունակությանը, կախված բեմադրական կամ նկարահանման նյութի բովանդակությունից:
Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է երաժշտական ստեղծագործությունների հատվածների հիման վրա գուշակել այդ ստեղծագործության անվանումը և հեղինակին և կարողանում է ներկայացնել վերջինիս համար առավել համապատասխան թատերական գեղագրային կամ հեռուստատեսային կարճ դրվագ:
Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է առաջարկված 5

երաժշտական հատվածներից գուշակել 4-ը, ներկայացնում է հայ ժողովրդական երաժշտարվեստից առնվազն 3 նմուշ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիսոտֆոն), լազեռային սկավառակներ տարաբնույթ երաժշտական ստեղծագործություններով, մասնագիտական գրականություն, ուղեցույցներ, անհրաժեշտ ծրագրերով գամալրված համակարգչային լսարան համակարգիչ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ <<ՆԿԱՐՉԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ>>

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՌԺՍ 5-11-010

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Մոդուլի նպատակն է ուսանողին հաղորդել՝

- ընդհանուր գիտելիքներ թատերական ներկայացման, կինոնկարի, հեռուստահաղորդման գեղարվեստական ձևավորման օրինաչափությունների և առանձնահատկությունների վերաբերյալ:
 - գիտելիքներ ձևավորման ընթացքում կիրառվող միջոցների վերաբերյալ,
 - տեղեկատվություն հիմնական եզրույթների և անվանումների վերաբերյալ
- Ընդհանուր գիտելիքների նկարիչ-ձևավորողի հիմնական գործառույթների և նրա կատարած դերի վերաբերյալ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

72 ժամ:

Տեսական ուսուցում՝ 20 ժամ:

Գործնական պարապմունք՝ 52 ժամ:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ Չկան

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

1. Կատարել գեղարվեստական ձևավորման նախագծում
2. Կատարել մակետավորում
3. Ներկայացնել գեղարվեստական ձևավորման և կոմպոզիցիայի բնութագիրը
4. Տիրապետել զգեստի ձևավորման հմտությունների,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1.

Կատարել գեղարվեստական ձևավորման նախագծում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է պատկերացնում գեղարվեստական ձևավորման կառուցվածքը և հաջորդականությունը,
- բ. ճիշտ է ներկայացնում ձևավորման կառուցվածի, տեսարանների քանակի, դրանց ընդհանուր բնութագրի առանձնահատկությունները,

գ. ճիշտ է նկարագրում նկարիչ – ձևավորողի կողմից սցենարի վրա տարվող աշխատանքը՝ մակետ, պլանավորում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 5 ժամ:

Գործնական աշխատանք՝ 10 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 2.

Կատարել մակետավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է ներկայացնում տարածության մեջ ծավալների և առարկաների դասավորության սկզբունքները,

բ. ճիշտ է պատկերացնում հարթ պատկերը ծավալայինի վերածելու գործընթացը,

գ. ճիշտ է ներկայացնում տարածքի մակետավորման համար օգտագործվող հիմնական նյութերը և օբյեկտները (ստվարաթուղթ, փայտ, թուղթ, գործվածք, շարժական պատեր, սյուներ, կահույք, երիզներ, պատուհաններ, դռներ, վարագույրներ և այլն):

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 5 ժամ:

Գործնական աշխատանք՝ 10 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 3.

Ներկայացնել գեղարվեստական ձևավորման և կոմպոզիցիայի բնութագիրը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է ներկայացնում պատկերավոր կերպար, միջավայր, ոճ ստեղծելու հնարների մասին,

բ. ճիշտ է ներկայացնում տարածքի ձևավորման առանձնահատկությունները կախված սցենարի բնույթից,

գ. ճիշտ է ներկայացնում գեղարվեստական ձևավորման վերջնարդյունքի և կոմպոզիցիայի բնութագիրը,

դ. ճիշտ է ներկայացնում զգեստի, կահույքի, շինության, պատերի, պաստառների, ինտերիերի և էքստերիերի, առանձին դեկորատիվ տարրերի կիրառման ժամանակ հավասարակշռության և կոմպոզիցիայի պահպանման առանձնահատկությունները,

ե. ճիշտ է ներկայացնում ձևավորման ժամանակ լույսի աղբյուրի նշանակությունը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 5 ժամ:

Գործնական աշխատանք՝ 10 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 4.

Տիրապետել զգեստի ձևավորման հմտությունների,

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է ներկայացնում զգեստի և նորաձևության ծագման և զարգացման պատմությունը,

բ. ճիշտ է ներկայացնում հագուստի տարատեսակների առանձնահատկությունները՝ զինվորական զգեստ, երեկոյան զգեստ, տարագ,

գ. ճիշտ է տարբերակում զգեստի ոճերը,

դ. ճիշտ է կատարում որևէ նախագծի իրականացման համար զգեստ ընտրելու և հիմնավորելու միջոցառումը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 5 ժամ:

Գործնական աշխատանք՝ 12 ժամ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ ԲՈԼՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արդյունքի յուրացումը գնահատվելու՝ գործնական աշխատանքի ցուցադրությամբ: Որև է սցենարի հիման վրա ստեղծած գեղարվեստական ձևավորման մանրակերտի կամ էսքիզների ցուցադրում

Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը կարողացել է ներկայացնել համապատասխան ժամանակաշրջանը, մջավայրը և հիմնական հերոսների ընդհանուր գեղարվեստական բնութագիրը:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Այս արդյունքի ուսուցանման համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան պարագաներով հագեցած արհեստանոց, ֆիլմադարան, գեղարվեստական ալբոմներ, ինտերիերի և էքստերիերի գեղարվեստական զարգացման պատմությունը ներկայացնող ալբոմներ, լուսանկարներ կամ պաստառներ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ <<ԵՌՈՒՍԱ ԵՎ ԿԻՆՈՏԵԽՆԻԿԱ>>

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՌԺՍ 5-11-011

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Մոդուլի նպատակն է ուսանողին ընդհանուր գիտելիքներ հաղորդել նկարահանումների ժամանակ օգտագործվող կինո և հեռուստատեխնիկայի, դրանց ունեցած դերի վերաբերյալ, ձևավորել դրանք կիրառելու հմտություններ

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 72 ժամ:

Տեսական ուսուցում՝ 30 ժամ:

Գործնական պարապմունք՝ 42 ժամ:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՌԺՍ 5-11-005 «Լուսանկարչություն» մոդուլը:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

1. Աշխատել տեսախցիկով
2. Աշխատել նկարահանման կռունկով
3. Տիրապետել հեռուստաքարշակով աշխատելու հմտություններին
4. Ներկայացնել արհեստական լուսավորության սարքերը, դրանց հնարավորությունները և կիրառման եղանակները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1.

Աշխատել տեսախցիկով

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում տեսախցիկների տեսակները և դրանց մասնագիտական գնահատականը,
- բ. ճիշտ է միացնում տեսախցիկը,
- գ. ճիշտ է տեղադրում տեսաերիզը,
- դ. ճիշտ է կատարում նկարահանում,
- ե. ճիշտ է անջատում տեսախցիկը,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Տվյալ արդյունքի գնահատման համար ուսանողին կհանձնարարվեն գործնականում ցուցադրել տեսախցիկի միացման, տեղադրման: Նկարահանման ընթացքի, ավարտի և տեսախցիկի անջատման ճիշտ գործողությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է համապատասխան տեխնիկական միջոցների առկայություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 7 ժամ:

Գործնական աշխատանք՝ 10 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 2.

Աշխատել նկարահանման կռունկով

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում կռունկի հնարավորությունները,
- բ. ճիշտ է ներկայացնում կիրառման անհրաժեշտությունն ու պայմանները,
- գ. ճիշտ է հաշվարկում հեռուստակռունկի անհրաժեշտ թռիչքի երկարությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հանձնարարություն կատարելու հիման վրա: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե ուսանողը արհեստավարժ գործողություններով ցուցադրի կռունկով աշխատելու հմտությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է համապատասխան տեխնիկական միջոցների առկայություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 7 ժամ:

Գործնական աշխատանք՝ 10 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 3.

Տիրապետել հեռուստաքարշակով աշխատելու հմտություններին

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում հեռուստաքարշակի անհրաժեշտության առանձնահատկությունները,
- բ. ճիշտ է ներկայացնում տվյալ վայրում դրա տեղադրման առանձնահատկությունները,
- գ. ճիշտ է հաշվարկում հեռուստաքարշակի գծուղու (ռելս) երկարությունն ու կորությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցուպատասխանի կամ տեստային առաջադրանքի միջոցով:

Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել հարցերի 70%-ին:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է համապատասխան տեխնիկական միջոցների առկայություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 7 ժամ:

Գործնական աշխատանք՝ 10 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 4.

Ներկայացնել արհեստական լուսավորության սարքերը, դրանց հնարավորությունները և կիրառման եղանակները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում արհեստական լուսավորության տարբեր սարքերի, լուսարձակների հնարավորությունները,
- բ. ճիշտ է հաշվարկում լուսային սարքերի էլեկտրաէներգիայի ծախսը,
- գ. ճիշտ է որոշում լույսի ջերմաստիճանը և դրանց կիրառման անհրաժեշտությունը,
- դ. ճիշտ է ներկայացնում ֆիլտրերի հնարավորությունները, դրանց կիրառման անհրաժեշտությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցուպատասխանի կամ տեստային առաջադրանքի միջոցով:

Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել հարցերի 70%-ին:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է համապատասխան տեխնիկական միջոցների առկայություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 9 ժամ:

Գործնական աշխատանք՝ 12 ժամ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ >>

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՌԺՍ 5-11-012

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Մոդուլի նպատակն է՝

- ուսանողին ծանոթացնել դրամատուրգիայի ծագման, հետագա զարգացման պատմությանը
- ընդհանուր գիտելիքներ հաղորդել դրամատուրգիական երկի վերաբերյալ,
- ձևավորել դրամատուրգիական ստեղծագործությունը վերլուծելու կարողություն
- ձևավորել թատրոնի, կինոյի և հեռուստատեսության բնագավառներում դրամատուրգիայի առանձնահատկությունները ընկալելու կարողություններ :

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

72 ժամ:

Տեսական ուսուցում՝ 50 ժամ:

Գործնական պարապմունք՝ 22 ժամ:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՌԺՍ 5-11-001 «Ռեժիսուրա», ՌԺՍ 5.11.001, «Հայ գրականություն» և ՌԺՍ 5.11.002 «Արտասահմանյան գրականություն», մոդուլները:

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

- 1.Ներկայացնել դրամատուրգիայի սկզբնավորման, արտահայտման ձևերին բնորոշ հատկանիշները
- 2.Ներկայացնել Հին Հունական ողբերգության առանձնահատկությունները
- 3.Ներկայացնել կատակերգության ձևավորման նախապայմանները, բնորոշ հատկանիշները և հիմնական հասկացությունները
- 4.Ներկայացնել դրամատուրգիայի զարգացման պատմությունը (Միջին դարեր, Վերածնունդ, Կլասիցիզմի շրջան)
- 5.Ներկայացնել դրամայի կատեգորիաները, կառուցվածքը և բեմականացման առանձնահատկությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1.

Ներկայացնել դրամատուրգիայի սկզբնավորման, արտահայտման ձևերին բնորոշ հատկանիշները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում հնագույն ծիսական արարողությունների ընդհանուր բնութագիրը,
- բ. ճիշտ է ներկայացնում ծիսական բեմականացումների հիմնական տարբերությունները,
- գ. ճիշտ է ներկայացնում Դիոնիսոսի պաշտամունքի հետ կապված ծիսական խաղերի առանձնահատկությունները,
- դ. ճիշտ է ներկայացնում դրամայի, ողբերգության և կատակերգության բնորոշ հատկանիշները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 10 ժամ:
Գործնական աշխատանք 4 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Ներկայացնել Հին Հունական ողբերգության առանձնահատկությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում հունական ողբերգության՝ որպես մշակութային դրսևորում, զարգացման առանձնահատկությունները,
- բ. ճիշտ է ներկայացնում Էսքիլեսի, Սոֆոկլեսի, Եվրիպիդեսի հիմնական ստեղծագործությունները,
- գ. ճիշտ է ներկայացնում պիեսների առանցքային կառուցվածքը,
- դ. ճիշտ է ներկայացնում ներկայացումների ժամանակ երգչախմբի դերը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 10 ժամ:
Գործնական աշխատանք՝ 4 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Ներկայացնել կատակերգության ձևավորման նախապայմանները, բնորոշ հատկանիշները և հիմնական հասկացությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում կատակերգության ձևավորման նախապայմանները, հիմնական բովանդակություն,
- բ. ճիշտ է բնութագրում Արիստոֆանեսի ստեղծագործության յուրահատկությունները,
- գ. ճիշտ է ներկայացնում Շեքսպիրի, Լոպե դե Վեգայի, Մոլիերի, Բոմարշեի ստեղծագործությունների բնութագրերը,
- դ. ճիշտ է պարզաբանում <<գրոտեսկ>>, <<ֆարս>>, <<ինտերմեդիա>>, <<վոդևիլ>> հասկացությունները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 10 ժամ:
Գործնական աշխատանք՝ 5 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 4.

Ներկայացնել դրամատուրգիայի զարգացման պատմությունը (Միջին դարեր, Վերածնունդ, Կլասիցիզմի շրջան)

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում միջին դարերի դրամատուրգիայի առանձնահատկությունները,
- բ. ճիշտ է ներկայացնում <<Միստերիաների>> ընդհանուր բնութագիրը,
- գ. ճիշտ է ներկայացնում Վերածննդի շրջանի դրամատուրգիայի առանձնահատկությունները և հիմնական ներկայացուցիչներին,
- դ. ճիշտ է ներկայացնում 17-18-րդ դարերի դրամատուրգիայի առանձնահատկությունները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 10 ժամ:

Գործնական աշխատանք՝ 5 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 5.

Ներկայացնել դրամայի կատեգորիաները, կառուցվածքը և բեմականացման առանձնահատկությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում դրամայի հիմնական կատեգորիաները,
- բ. ճիշտ է ներկայացնում դրամատիկ գործողության կառուցվածքը,
- գ. ճիշտ է ներկայացնում դրամայի և բեմական կերպավորման հիմնախնդիրները ,
- դ. ճիշտ է ներկայացնում դրաման և բեմականացման հիմնախնդիրները,
- ե. ճիշտ է բնութագրում դրամայի և դերասանական արվեստի կապը :

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 10 ժամ:

Գործնական աշխատանք՝ 4 ժամ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ ԲՈԼՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների), հարց ու պատասխանի միջոցով.

Ուսանողը հայ և համաշխարհային դրամատուրգիային վերաբերող փոքր հետազոտական աշխատանքներ է ներկայացնում (2 -3 համակարգչային էջի սահմանում)

- Հին Հունական ողբերգության առանձնահատկությունները
- հնագույն ծիսական արարողությունների ընդհանուր բնութագիրը
- Դիոնիսոսի պաշտամունքի հետ կապված ծիսական խաղերի առանձնահատկությունները,
- դրամայի, ողբերգության և կատակերգության բնորոշ հատկանիշները
- Արիստոֆանեսի ստեղծագործության յուրահատկությունները
- Շեքսպիրի, Լոպե դե Վեգայի, Մոլիերի, Բոմարշեի ստեղծագործությունների բնութագրերը,
- <<գրոտեսկ>>, <<ֆարս>>, <<ինտերմեդիա>>, <<վոդևիլ>> հասկացությունները:
- <<Միստերիաների>> ընդհանուր բնութագիրը,
- Վերածննդի շրջանի դրամատուրգիայի առանձնահատկությունները և հիմնական ներկայացուցիչներին,
- 17-18-րդ դարերի դրամատուրգիայի առանձնահատկությունները և այլն:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացնում է առնվազն երեք աշխատանք:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի յուրացումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով:

Դասավանդման ընթացքում կիրառվում են ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ:

Գործնական հմտությունների ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ է կիրառել առանձին մեթոդներ և հնարքներ՝ ստեղծագործական (հիմնախնդիրային) հանձնարարություններ, աշխատանքը փոքր խմբում, ինտերակտիվ ելույթ, երկխոսություն, որոշումների ծառ, ուղեղային գրոհ, ունեցի՛ր դիրքորոշում, համառոտ ելույթ, բանավեճ և քննարկում, մասնագետի հրավիրում, դերային խաղեր:

Ուսումնական ռեսուրսներից անհրաժեշտ են՝ ուսումնական գրականություն, ցուցադրական պիտույքներ (պաստառներ, սխեմաներ), ցանակալի է էլեկտրոնային ձևով, թատերագրության զարգացման տարբեր ժամանակահատվածներ կամ հեղինակներ ներկայացնող տարբեր գեղար-

վեստական այբոմներ, ուսումնական ծրագրի վրա կազմված թեսթերի շտեմարան, ուսումնական արդյունքներին վերաբերող խնդիրների (կազուսների) շտեմարան, ուսումնական արդյունքին վերաբերող տրամաբանական հարցաշարեր, բանավեճերի և քննարկումների կողմնորոշող թեմաներ, գրավոր զեկուցումների թեմաներ, դերային խաղերի սցենարներ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ <<ԹԱՏԵՐԱԿԱՆ/ԲԵՄԱԿԱՆ/ ՌԵԺԻՍՈՒՐԱ>>

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՌԺՍ 5-11-013

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ

Ռիսանոդի մոտ ձևավորել թատերական ներկայացման/այդ թվում օպերային, կրկեսային, մնջախաղային/ բեմադրմանը, կազմակերպմանը, իրականացմանը և ցուցադրմանն օգնելու, աջակցելու կարողություններ,

բեմադրական փորձեր նախապատրաստելու հմտություններ, դերասանների և ներկայացման մասնակիցների հետ տեքստի վրա աշխատանքների կազմակերպման և անցկացման հմտություններ, բեմադրված հատվածների, այդ թվում երաժշտական, պարային, զանգվածային և այլ, փորձերի կազմակերպման և անցկացման հմտություններ, ներկայացման տեխնիկական, լուսային և հնչյունային պարտիտուրա կազմելու հմտություններ, ներկայացումը վարելու, մասնակից բոլոր ստորաբաժանումների աշխատանքը համակարգելու հմտություններ

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 108 ժամ:

Տեսական ուսուցում՝ 40 ժամ:

Գործնական պարապմունք՝ 68 ժամ:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՌԺՍ 5-11-003 «Ռեժիսուրա» մոդուլը:

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

1. Աշխատել դրամատիկական երկի վրա
2. Ապահովել նկարչական ձևավորում
3. Ապահովել երաժշտական ձևավորում
4. Աշխատել դերասանների հետ
5. Բեմադրության ցուցադրություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Աշխատել դրամատիկական երկի վրա

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է վերլուծում դրամատիկական ստեղծագործությունը,
բ. ճիշտ է մեկնաբանում ռեժիսորի մոտեցումները բեմադրության ռեժիսորական լուծումների հետ կապված,

գ.ճիշտ է ներկայացնում ռեժիսորի կողմից դերասանական հիմնական և փոխարինող կազմերին ներկայացվող պահանջները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 8 ժամ:
Գործնական աշխատանք՝ 13 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Ապահովել նկարչական ձևավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա.ճիշտ է ներկայացնում նկարչին կամ դիզայներին ռեժիսորի պահանջները բեմադրության համար անհրաժեշտ դեկորների և ձևավորման վերաբերյալ,
բ.ճիշտ է ընտրում համապատասխան ռեկվիզիտներ և հանդերձներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 8 ժամ:
Գործնական աշխատանք՝ 14 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 3.

Ապահովել երաժշտական ձևավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա.ճիշտ է ընտրում կատարվելիք երգերը և կազմակերպում երաժշտական կատարումների ստուդիական ձայնագրում,
բ.ճիշտ է կատարում բեմադրության համար անհրաժեշտ երաժշտական և հնչյունային շարքի հավաքագրումը,
գ.ճիշտ է դրսևորում երաժշտական և հնչյունային շարքի ամբողջականության ու հաջորդականության ապահովման հմտությունները,
դ.ճիշտ է դրսևորում կազմակերպական և համագործակցային հմտությունները

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 8 ժամ:
Գործնական աշխատանք՝ 13 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 4.

Աշխատել դերասանների հետ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա.ճիշտ է ներկայացնում դերասանների և մասնակիցների, անհրաժեշտության դեպքում փոխարինողների հետ աշխատելու առանձնահատկությունները,
բ.ճիշտ է ցուցադրում օրացուցային գրաֆիկով աշխատելու կարողություններ
գ.ճիշտ է իրականացնում դերասանի կամ դերասանների խմբի հետ աշխատանքը տեքստի վրա,
դ.ճիշտ է ներկայացնում դերասաններին դրամատիկական ստեղծագործությունից և ռեժիսորի մոտեցումներից բխող կերպարներին ներկայացվող պահանջները,
ե.ճիշտ է դրսևում դերասանների հետ բեմադրված հատվածների, այդ թվում երաժշտական, պարային, զանգվածային և այլ փորձերի կազմակերպման և անցկացման կարողությունները,
զ.ճիշտ է վերահսկում լեզվի ճիշտ շեշտադրությունը, ազդեցիկությունը,
է.ճիշտ է մեկնաբանում ռեժիսորի կողմից ներկայացված պահանջների հստակ կատարման վերահսկողությունը,

ը.ճիշտ է կազմում ներկայացման տեխնիկական, լուսային և հնչյունային պարտիտուրան:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 8 ժամ:

Գործնական աշխատանք՝ 14 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 5.

Բեմադրության ցուցադրություն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա.ճիշտ է մեկնաբանում ցուցադրման օրը ռեժիսորի կողմից ներկայացված պահանջների /գրիմ, հագուստ, օգտագործվող ռեկվիզիտ/ դերասանների և մասնակիցների պատրաստվածության առանձնահատկությունները,

բ.ճիշտ է ներկայացնում ներկայացման համար տեխնիկական, լուսային և հնչյունային ապահովվածության համար պատասխանատու ստորաբաժանումների նախապատրաստվածության առանձնահատկությունները,

գ.ճիշտ է դրսևորում կազմակերպելու, վերահսկելու և համագործակցելու հմտությունները,

դ.ճիշտ է ներկայացնում մասնակիցների մուտքի-ելքի սահուն ընթացքի կազմակերպման ձևերը,

ե.ճիշտ է վարում ներկայացումը և համակարգում է մասնակից բոլոր ստորաբաժանումների աշխատանքը:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 8 ժամ:

Գործնական աշխատանք՝ 14 ժամ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ ԲՈԼՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արդյունքների յուրացումը գնահատվում է համակուրսեցիների օգնությամբ իրականացված թատերային կարճ ներկայացման միջոցով:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ներկայացված բեմականացման մեջ առկա է սցենարի իրագործման ստեժագործական մոտեցում, գրագետ լուսավորություն, երաժշտական նկարչական /պայմանական/ ձևավորում, կատարված է դերասանական կազմի հետաքրքիր ընտրություն:

ՄԵԹՈՂԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական պարպմունքների իրականացման միջոցով:

Թատերային ներկայացումների փորձերի համար հարմարեցված լսարան՝ հարթակ, լուսավորություն, երաժշտական և նկարչական ձևավորումներ իրականացնելու համար նախատեսված տեխնիկական միջոցներ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՉԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՌԵԺԻՍՈՒՐԱ>>

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՌԺՍ 5-11-014

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել՝

- զանգվածային միջոցառումների, արարողակարգային հանդիսությունների բեմադրմանը, կազմակերպմանը, իրականացմանը և նկարահանմանն օգնելու, աջակցելու կարողություններ,
- հաղորդավարի նախապատրաստման աշխատանքներ կատարելու հմտություններ,

- մասնակիցների՝ դերասանների, երգիչ-երգչուհիների, պարային և այլ օժանդակ խմբերի ընտրության, նրանց հետ հանդիսության թեմայի շուրջ բացատրական աշխատանքներ տանելու, միջոցառմանը նախապատրաստելու հմտություններ,
- մասնակիցների հետ նախնական փորձերի իրականացման հմտություններ,
- բազմատեսախցիկային նկարահանումների ժամանակ՝ ռեժիսորական վահանակի կառավարման հմտություններ,

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

108 ժամ

Տեսական ուսուցում 80 ժամ
Գործնական պարապմունք 28 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՌԺՍ 5-11-003 «Ռեժիսուրա» մոդուլը:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

1. Աշխատել սցենարի վրա
2. Ապահովել նկարչական ձավորում
3. Ապահովել երաժշտական ձևավորում
4. Աշխատել հաղորդավարների հետ
5. Իրականացնել բեմականացում

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1.

Աշխատել սցենարի վրա

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է դրսևորում սցենարը, նախագիծը վերլուծելու կարողությունները,
- բ. ճիշտ է ընտրում անցկացման վայրը,
- գ. ճիշտ է դրսևորում տվյալ վայրի ադմինիստրատիվ ղեկավարության հետ պայմանավորվածություններ ձեռք բերելու կարողությունը,
- դ. ճիշտ է ներկայացնում սցենարային պլանը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 16 ժամ
 Գործնական աշխատանք՝ 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2.

Ապահովել նկարչական ձավորում :

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում անհրաժեշտ դեկորների և ձևավորման առանձնահատկությունները,

- բ. ճիշտ է մեկնաբանում նկարչին կամ դիզայներին անհրաժեշտ դեկորների և ձևավորման ռեժիսորի պահանջները,
- գ. ճիշտ է ընտրում համապատասխան ռեկվիզիտները և հանդերձները:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 16 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3.

Ապահովել երաժշտական ձևավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում փորձերին և հանդիսությանը ձայնային տեխնիկայի օգտագործման առանձնահատկությունները,
- բ. ճիշտ է ներկայացնում ձայնային տեխնիկայի ներկայությունը փորձերին և հանդիսությանը ապահովելու միջոցառումները,
- գ. ճիշտ է դրսևորում երգերի ընտրության կարողությունները,
- դ. ճիշտ է ցուցադրում ձայնագրությունների կազմակերպման հմտությունները,
- ե. ճիշտ է կատարում երաժշտական համարների ձայնագրությունների կենտրոնացումը:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 16 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4

Աշխատել հաղորդավարների հետ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա.ճիշտ է ներկայացնում ըստ սցենարի մասնակիցների օրացուցային ներկայության ապահովումը,
- բ.ճիշտ է ցուցադրում հաղորդավարների հետ շփվելու և հաղորդակցվելու կարողությունները,
- գ.ճիշտ է ներկայացնում թեմայի, տեքստի և կադրերի ներդաշնակության պահանջները,
- դ.ճիշտ է կիրառում լեզվի ճիշտ շեշտադրության, ազդեցիկության առանձնահատկությունները:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 16 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5

Իրականացնել բեմականացում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա.ճիշտ է բեմադրում հանդիսությունն ամբողջությամբ և հատվածաբար,
- բ.ճիշտ է կատարում տարբեր խմբերի հետ դրվագային փորձերը,
- գ.ճիշտ է ներկայացնում հանդիսության օրը մասնակիցների մուտքի-ելքի սահուն ընթացքը կազմակերպելու առանձնահատկությունները,
- դ.ճիշտ է ներկայացնում ամբողջ նյութատեխնիկական բազայի վերահաշվարկի, տեղափոխման, պահեստավորման ու վերադարձի առանձնահատկությունները:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 16 ժամ
Գործնական աշխատանք՝ 5 ժամ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ ԲՈԼՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի միջոցով: Նախապես պատրաստած թերթիկների վրա կառաջարկվեն զանգվածային հանդիսությունների թեմաներ՝ "Ամանոր", " Քաղաքի օրը", " Սեմտեմբերի 10, 11 Օլիմպիական խաղերի բացումը" և այլն: Պահանջվում է ներկայացնել համապատասխան հանդիսության իրականացման համառոտ նախագիծ 1-2 էջի սահմանում:

ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և ուսումնական գրականություն, ուսուցողական նյութեր, ցանկալի է ունենալ ֆիլմադարան, Հայաստանում և աշխարհի տարբեջ վայրերում տեղի ունեցած զանգվածային ջբեղ և ազդեցիկ միջոցառումների մասին պատմող ֆիլմերով:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԿԻՆՈՒԵԺԻՍՈՒՐԱ>>

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՌԺՍ 5-11-015

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կինոարտադրության ստեղծագործական, տեխնիկական, փաստաթղթային աշխատանքների կազմակերպման հմտություններ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 108 ժամ

Տեսական ուսուցում 40 ժամ
Գործնական պարապմունք 68 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՌԺՍ 5-11-003 «Ռեժիսուրա» մոդուլը:

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

1. Աշխատել ռեժիսորական սցենարի հետ
2. Աշխատել դերասանների և մասնակիցների հետ
3. Ապահովել նկարահանում
4. Հանձնել և ցուցադրել Ֆիլմ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1.

Աշխատել ռեժիսորական սցենարի հետ :

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա.ճիշտ է պատրաստում ըստ ռեժիսորական սցենարի նկարահանման թերթիկները,
բ.ճիշտ է կատարում նկարահանման վայրերի նախնական ընտրությունը,
գ.ճիշտ է ներկայացնում նկարահանմանն անհրաժեշտ տեխնիկայի, դեկորացիայի, ռեկվիզիտների, հագուստների հայտերի, հաշվառման և գրանցման պահանջները,
դ.ճիշտ է մեկնաբանում իրավաբանական ակտեր ու փաստաթղթեր կազմելու և ձևակերպելու կարգն ու կանոնները,
ե.ճիշտ է կազմում ըստ ռեժիսորական սցենարի աշխատանքային օրացուցային պլանը,
զ.ճիշտ է ներկայացնում օգտագործվելիք նյութերի հեղինակային իրավունքների գրանցման, օգտագործման թույլտվությունների պայմանագրային փաստաթղթեր կազմելու կարգն ու կանոնները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 10 ժամ
Գործնական աշխատանք՝ 17 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Աշխատել դերասանների և մասնակիցների հետ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա.ճիշտ է կատարում դերասանների և մասնակիցների նախնական ընտրությունը, լուսանկարումը,
բ.ճիշտ է դրսևորում աշխատանքային սեղանի շուրջ սցենարային քննարկումներ կազմակերպելու կարողությունները,
գ.ճիշտ է դրսևորում նախապատրաստական փորձեր կատարելու կարողությունը,
դ.ճիշտ է բացատրում բեմադրական պարզագույն դրվագների միզանսցենների կատարելու կարողություն,
ե.ճիշտ է իրականացնում դերասանների և զանգվածային տեսարանների մասնակիցների ներկայությունը նկարահանումներին ապահովումը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 10 ժամ
Գործնական աշխատանք՝ 17 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Ապահովել նկարահանում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա.ճիշտ է ներկայացնում նկարահանող խմբի աշխատանքային անհրաժեշտ պայմաններն ապահովելու առանձնահատկությունները,
բ.ճիշտ է ցուցաբերում անհրաժեշտ տեխնիկայի և նյութերի ապահովումը կազմակերպելու կարողությունը,
գ.ճիշտ է ներկայացնում նկարահանումների ընթացքում մասնակիցների անխափան ելքի ու մուտքի ապահովման առանձնահատկությունները,
դ.ճիշտ է կեդավորում ընթացիկ նկարահանված ժապավենները,
ե.ճիշտ է դրսևորում նկարահանված էպիզոդիկ կադրերի կրկնօրինակները (դուբլերը) տարանջատելու, լավագույններն ընտրելու կարողությունները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 10 ժամ
Գործնական աշխատանք՝ 17 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4

Հանձնել և ցուցադրել Ֆիլմ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է կատարում մոնտաժային աշխատանքների ղեկավարումը,

բ. ճիշտ է պատրաստում ֆիլմի սևագիր օրինակը,

գ. ճիշտ է ներկայացնում դերաձայնագրման աշխատանքների (տոնիրովկա) կազմակերպման աշխատանքները հմտություններ,

դ. ճիշտ է ներկայացնում ֆիլմի արխիվացման, մոնտաժային էջերի պատրաստման, ֆիլմի հանձնման առանձնահատկությունները,

ե. ճիշտ է ներկայացնում կատարման ակտերի և ֆինանսական փաստաթղթերի ձևակերպման և հաշվառման օրինաչափությունները,

զ. ճիշտ է մեկնաբանում ցուցադրման գովազդի (ազդագրեր, բուկլետներ, հայտագրեր, նախացուցադրական հոդվածներ և այլն) կազմակերպումը,

է. ճիշտ է ներկայացնում ֆիլմի ցուցադրության կազմակերպման կարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ ԲՈԼՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արդյունքների յուրացումը գնահատվում է համակուրսեցիների օգնությամբ իրականացված կարճ կինոնախագծի ներկայացման միջոցով:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ներկայացված կինոնախագծում առկա է սցենարի իրագործման ստեժագործական մոտեցում, գրագետ և ինքնատիպ ռեժիսորական աշխատանք, երաժշտական նկարչական /պայմանական/ ձևավորում, կատարված է դերասանական կազմի հետաքրքիր ընտրություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական պարամունքների իրականացման միջոցով:

Ռեկվիզիտի, գրիմի, նկարահանում իրականացնելու համար հարմարեցված լսարան կամ տարածք՝ հարթակ, լուսավորություն, երաժշտական և նկարչական ձևավորումներ իրականացնելու համար նախատեսված տեխնիկական միջոցներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 17 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԵՌՈՒՍՏԱՌԵԺԻՍՈՒՐԱ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՌԺՍ 5-11-016

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել՝

- հեռուստառադիոհաղորդումների բեմադրման, կազմակերպման, իրականացմանն ու նկարահանմանն օգնելու, աջակցելու կարողություններ,
- հաղորդավարի նախապատրաստման աշխատանքներ կատարելու հմտություններ,
- մասնակիցների ընտրության, նրանց հետ թեմայի շուրջ բացատրական աշխատանքներ տանելու, հաղորդմանը նախապատրաստելու հմտություններ,
- բազմատեսախցիկային նկարահանումների ժամանակ՝ ռեժիսորական վահանակի կառավարման հմտություններ,
- նկարահանող խմբի աշխատանքների կազմակերպման հմտություններ,

համակարգչային հեռուստառադիոնոնտաժի կորրեկցիաների հմտություններ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 108 ժամ

Տեսական ուսուցում 49 ժամ
Գործնական պարապմունք 59 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՌԺՍ 5-11-003 «Ռեժիսուրա» մոդուլը:

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

1. Աշխատել սցենարի վրա
2. Ներկայացնել հեռուստատեսային ժանրերը
3. Տիրապետել հեռուստալրագրության էթիկային
4. Աշխատել հաղորդավարի կամ լրագրողի հետ
5. Աշխատել մասնակիցների և հանդիսատեսի հետ
6. Ապահովել նկարահանում
7. Ներկայացնել ժամանակացույցի, արարողակարգի առանձնահատկությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1.

Աշխատել սցենարի վրա

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում սցենարի տեսակները,
- բ. ճիշտ է վերլուծում սցենարը, նախագիծը,
- գ. բեմադրական կամ նկարահանման պայմանները ճիշտ է համապատասխանացնում սցենարի պահանջներին,
- դ. ճիշտ է կազմակերպում աշխատանքներն՝ ըստ սցենարային պլանի:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 7 ժամ
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Ներկայացնել հեռուստատեսային ժանրերը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում հեռուստատեսային ժանրերը՝ տեղեկատվական, ելույթ, երկխոսություն, ռեպորտաժ, հեռուստաֆիլմ, բանավեճ, թույլ-շոու, ակնարկ, հումորային ծրագրեր և այլն,
- բ. ճիշտ է տարանջատում հեռուստատեսային ժանրերի տարբերությունները և առանձնահատկությունները,
- գ. ճիշտ է ներկայացնում հեռուստատեսային ժանրերի բովանդակության արտահայտման ձևերը:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 7 ժամ
Գործնական աշխատանք՝ 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3.

Տիրապետել հեռուստալրագրության էթիկային

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում հեռուստալրագրության էթիկայի նորմերի պահանջները,
- բ. ա.ճիշտ է ներկայացնում հեռուստատեսության պարտադիր վարքականոնները,
- գ. ա.ճիշտ է վերլուծում հեռուստատեսության պարտադիր վարքականոնները, կարողանալ կարծիք հայտնել,
- դ.ճիշտ է ներկայացնում լրագրողի և հաղորդավարի մասնագիտական էթիկայի կանոնագիրքը,
- ե. լրագրողներին, վարողներին, մասնակիցներին ճիշտ է ներկայացնում իր պահանջները էթիկայի նորմերի շուրջ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 7 ժամ
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4

Աշխատել հաղորդավարի կամ լրագրողի հետ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա.ճիշտ է նախապատրաստում հաղորդավարին կամ լրագրողին,
- բ.ճիշտ է ներկայացնում հաղորդավարին կամ լրագրողին պահանջներ՝ թեմայի, տեքստի և կադրերի ներդաշնակության վերաբերյալ,
- գ.ճիշտ է կարողանում ուղղորդել հաղորդավարի կամ լրագրողի մտքի թեմատիկ ընթացքը,
- դ. հաղորդավարի կամ լրագրողի կողմից ճիշտ է ապահովում հեռուստատեսային էթիկայի նորմերի պահպանումը,
- ե.ճիշտ է վերահսկում լեզվի ճիշտ շեշտադրումը, ազդեցիկությունը:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 7 ժամ
Գործնական աշխատանք՝ 7 ժամ:.

ԱՐԴՅՈՒՆՔ 5

Աշխատել մասնակիցների և հանդիսատեսի հետ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա.ճիշտ է նախապատրաստում գլխավոր մասնակիցներին և հանդիսատեսին,
- բ.ճիշտ է ներկայացնում թեման գլխավոր մասնակիցներին և հանդիսատեսին,
- գ.ճիշտ է բացատրում տվյալ հաղորդման պահանջները,
- դ.ճիշտ է կազմակերպում բեմադրական հատվածներն ըստ անհրաժեշտության,
- ե.ճիշտ է բացատրում գլխավոր մասնակիցներին և հանդիսատեսին խոսափողի տեսախցիկի հետ աշխատելու ձևերը:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 7 ժամ
Գործնական աշխատանք՝ 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6

Ապահովել նկարահանում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա.ճիշտ է ընտրում նկարահանման վայրը, տաղավարը,
բ.ճիշտ է կազմակերպում նկարահանող խմբի դիրքավորումը,
գ.ճիշտ է որոշում տեսախցիկների տեսանկյունները,
դ.ճիշտ է կիրառում օպտիկական էֆեկտներ օգտագործելու հմտությունները,
ե.ճիշտ է կիրառում լուսային էֆեկտներ օգտագործելու կարողությունները,
զ.ճիշտ է կատարում լուսային դիրքորոշումը,
է.ճիշտ է ներկայացնում տաղավարի դեկորատիվ ձևավորման /դիզայնի/ առանձնահատկությունները,
ը.ճիշտ է կառավարում նկարահանման վահանակը,
թ.տիրապետում է նկարահանող խմբին կադրի ճշտության, լուսային, երաժշտական էֆեկտների մատուցման հրահանգներ տալու կարողություններին

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 7 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 7

Ներկայացնել ժամանակացույցի, արարողակարգի առանձնահատկությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա.ճիշտ է կազմում ըստ սցենարային պլանի աշխատանքային պլանը և ժամանակացույցը,
բ.ճիշտ է ներկայացնում պաշտոնական և հանդիսավոր միջոցառումների արարողակարգերն ամբողջությամբ և նրբություններով,
գ.ճիշտ է ներկայացնում պաշտոնական և հանդիսավոր միջոցառումների արարողակարգերի առանձնահատկությունները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 7 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ ԲՈԼՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական աշխատանքի միջոցով: Նախապես պատրաստած թերթիկների վրա կառաջարկվեն հեռուստատեսային հաղորդաշարերի թեմաներ: Պահանջվում է ներկայացնել հեռուստատեսային հաղորդման իրականացման համառոտ նախագիծ1-2 էջի սահմանում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և ուսումնական գրականություն, ուսուցողական նյութեր, ցանկալի է ունենալ ֆիլմադարան, Հայաստանում և աշխարհի տարբեջ վայրերում տեղի ունեցած զանգվածային շքեղ և ազդեցիկ միջոցառումների մասին պատմող ֆիլմերով:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԻՆՈՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՌԺՍ 5-11-017

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

ՌԻսանողին տալ ընդհանուր գիտելիքներ հայ և համաշխարհային կինոարվեստի զարգացման, խաղարկային և ոչ խաղարկային ֆիլմերի և կինոժանրերի մասին, նշանավոր ռեժիսորների և դերասանների մասին, ծանոթացնել նրանց ստեղծագործության առանձնահատկություններին:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

108 ժամ

Տեսական ուսուցում 84 ժամ

Գործնական պարապմունք 24 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

Չկան

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա.

- 1.Ներկայացնել կինոարվեստի սկզբնավորման և զարգացման պատմությունը, կինոարտադրության ժամանակակից տեխնիկական հնարները և առանձնահատկությունները
- 2.Ներկայացնել համաշխարհային կինոյի պատմությունը
- 3.Ներկայացնել հայ կինոյի պատմությունը
- 4.Ներկայացնել համր կինոյի բնութագիրը հայ և արտասահմանյան կինոարվեստում
- 5.Ներկայացնել հնչուն կինոյի առանձնահատկությունները
- 6.Ներկայացնել ժանրային կինոարվեստի բովանդակային առանձնահատկությունները
- 7.Ներկայացնել անիմացիոն կինոյի պատմությունը և բնութագիրը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1.

Ներկայացնել կինոարվեստի սկզբնավորման և զարգացման պատմությունը, կինոարտադրության ժամանակակից տեխնիկական հնարները և առանձնահատկությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում կինոյի սկզբնավորման և զարգացման պատմությունը,
- բ. ճիշտ է ներկայացնում կինոարվեստի տարածման աշխարհագրական և ժամանակագրական օրինաչափությունները,
- գ. ճիշտ է ներկայացնում կինոյի տեսության ընդհանուր հիմունքները,
- դ. ճիշտ է ներկայացնում կինոյի որպես արվեստի յուրահատուկ տեսակի ընդհանուր օրինաչափությունները,
- ե. ճիշտ է ներկայացնում կինոյի և արվեստի մյուս տեսակներում արտահայտչականության յուրահատկությունները,
- զ. ճիշտ է ներկայացնում կինոարտադրության ժամանակակից տեխնիկական հնարները և առանձնահատկությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

